Արձանագրություն 3

<<ՀՀԿԳՆԳՀԱՇՁԲ-17/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

15.08.2017 թ.
ժ.10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Կարախանյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Մ. Աղայանց /գնահատող/
Ա. Խաչատրյան /գնահատող/
Ա. Դանիելյան /բացող/
Մ. Պողոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

1. Որակավորման փաստաթղթերի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների մասին
(Մ. Կարախանյան)

1.1 <<Կամպարե>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

1.2 11.08.2017թ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է համապատասխան եզրակացությունը:

1.3 Հանձնաժողովի կողմից Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները.

- Ներկայացված 08.06.2015թ ''Բարձրավոլտ էլեկտրացանցեր'' ՓԲԸ-ի հետ կնքված թիվ Բ53/15 պայմանագիրը թերի է, քանի որ բացակայում են պայմանագրում նշված և անբաժանելի մասը համարվող թիվ 1-4 հավելվածները, ինչպես նաև թիվ 1 համաձայնագիրը:

- Բացակայում է հավելված 5.1-ով ներկայացված ավտոկռանի արտադրության տարեթիվը:

- Բացակայում է հավելված 5.2-ով ներկայացված մասնագետի գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը առաջարկել <<Կամպարե>> ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.4 Հանձնաժողովի հաջորդ նիստը կազմակերպել ս.թ. օգոստոսի 18-ին, ժամը 14:00-ին ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկի, 308 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Մ. Կարախանյան /նախագահ/

Մ. Աղայանց

Ա. Խաչատրյան

Ա. Դանիելյան

Մ. Պողոսյան

Ա. Մարգարյան /քարտուղար/

Արձանագրություն 4

<<ՀՀԿԳՆԳՀԱՇՁԲ-17/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով
գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան	18.08.2017թ. ժ.14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Մ. Կարախանյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝	Մ. Աղայանց /գնահատող/
	Ա. Խաչատրյան /գնահատող/
	Ա. Դանիելյան /բացող/
	Մ. Պողոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Մարգարյան

1. Արձանագրված անհամապատասխանությունները շտկելու և հայտը գնահատելու մասին

(Մ. Կարախանյան)

1.1 <<Կամպարե>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են փաստաթղթեր արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ:

1.2 Հանձնաժողովը քննարկելով ներկայացված փաստաթղթերը արձանագրեց հետևյալը՝ մասնագիտական փորձառությունը հիմնավորելու համար ներկայացված պայմանագիրը թերի է, մանսավորապես.

- թիվ 1 համաձայնագրին կից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը ամբողջական չէ
- թիվ 2 համաձայնագրով սահմանված կից ծավալաթերթ-նախահաշիվը բացակայում է:

Նշված համաձայնագրերը համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 , դեմ 0:

2. Գնահատման գործընթացը շարունակելու մասին

(Մ. Կարախանյան)

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը և հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները <<Կամպարե>> ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել այն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 , դեմ 0:

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը առաջարկել երկրորդ տեղը զբաղեցրած մասնակցին ներկայացնելու հրավերի II մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.3 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցից հրավերի II մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան եզրակացությունը ստանալուց հետո՝ հաջորդ աշխատանքային օրը ժամը 10:30-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Մ. Կարախանյան /նախագահ/

---------- Մ. Աղայանց

---------- Ա. Խաչատրյան

---------- Ա. Դանիելյան

---------- Մ. Պողոսյան

---------- Ա. Մարգարյան /քարտուղար/